«Շիրակացու ճեմարան»
Միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ

2022-2023

Պատմություն (8-րդ դասարան)

ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

1. Լրացնե՛լ բաց թողնված բառերը.

Աստրախանում 1810 թվականին բացվեց ---------- դպրոցը: Հովհաննես Լազարյանի կտակի համաձայն ---------- 1815 թ. բացվեց Լազարյան ճեմարանը: ---------- ջանքերով 1824 թ. Թիֆլիսում հիմնվեց Ներսիսյան դպրոցը: 1.0

2. Մեծ Հայքի ո՞ր նահանգն է պատկերված քարտեզում: Ինչու՞ էր այն համարվում ամենանշանավորը: Որքա՞ն էր Մեծ Հայքի տարածքը, քա՞նի նահանգներից էր այն բաղկացած: 1.0

---

3. «Պապ թագավորն ու Ներսես եպիսկոպոսապետը կանգնած մնացին Նպատ լեռան վրա, և սուրբ Ներսեսը իր մշտատարած ձեռքերը երկինք բարձրացնելով, խնդրում էր Տիրոջից, որ խնայե իր ուխտին և սուրբ եկեղեցիներին: Մինչդեռ նա աղոթում էր Աստծուն, հայոց բոլոր զորքերի ճակատը կրակի նման գնում էր Պարսից զորքերի դեմ....»:

Ո՞ր պատմիչն է վերոգրյալ խոսքերի հեղինակը: Ո՞ր ճակատամարտի մասին է նա վկայում: Ինչպե՞ս ավարտվեց այն: 1:0

---

4. Լրացրե՛ք «Հայկական հարցի միջազգայնացումը» աղյուսակը: 2.0

Պայմանագիրը	Տարեթիվը	Հոդվածը	Բովանդակությունը	Տարածքային հարցերը	Նշանակությունը
Սան Ստեֆանոյի					
Բեռլինի վեհաժողովի					

5. Ի՞նչ գիտեք նկարում պատկերված վայրի մասին: Ո՞ր թագավորն է այնտեղ թողել արձանագրություն: Ո՞ր թագավորության ներկայացուցիչներից է նա: Ո՞ր թվականներին է կառավարել: 2.0

---

6. Նշե՛ք Իսրայել Օրու և Հովսեփ Էմինի գործունեության վերաբերյալ առնվազն երեք տարբերություն և չորս նմանություն: Ստեղծեք համեմատական աղյուսակ ձեր պատկերացմամբ: 2.0

7. Ներկայացրե՛ք Կիլիկիայի հայկական պետության արքունիքում գործող գործակալությունները և նրանց գործունեությունը գծապատկերի տեսքով: 3.0

8. Հայոց ո՞ր թագավորության օրոք են կառուցվել ստորև տրված նկարներում պատկերված ճարտարապետական կոթողները: Ե՞րբ է հիմնադրվել և անկում ապրել այդ թագավորությունը: Նշե՛ք այդ դինաստիայից մի քանի արքաների և նրանց կատարած նշանավոր գործերի մասին: Ո՞ր ճարտարապետական կոթողներն են պատկերված նկարում: 3.0

1. 2.

3. 4.

---

9. Ու՞մ դամբարանն է պատկերված նկարում: Ո՞ր թվականներին է կառավարել այդ թագավորը: Ի՞նչ գիտեք այդ կոթողի մասին: 2.0

---

10. Պատմական ո՞ր ժամանակաշրջանում են ստեղծվել հետևյալ նկարները: Ե՞րբ և որտե՞ղ է այն սկզբնավորվել: Նշե՛ք մի քանի գործիչների և նրանց ստեղծագործություններից: 3.0